ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՄԱՐԻ ԻԶՄԻՐԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՏՈՒՆ» ՊՈԱԿ

" CHILDREN'S HOME – AFTER MARIE IZMIRLIAN " STATE NON COMMERCIAL ORGANIZATION OF THE MINISTRY OF LABOUR AND SOCIAL ISSUES OF REPUBLIC OF ARMENIA

« 15 » « մայիսի » 2024թ. N 83

«ԱրմՎիլ Գրուպ» ՍՊԸ –ի տնօրեն՝
Պարոն Արման Գալստյանին

Ծ Ա Ն Ու Ց Ու Մ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի՛ պարոն Գալստյան,

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «ԱրմՎիլ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 02.02.2024թ-ին կնքված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/6-ԵԽ-3-ՄԻ» ծածկագրով «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար տնտեսական, սանիհիգիենիկ և մաքրիչ նյութերի մատակարարման գնման պայմանագիր, որի 1.1 կետի համաձայն վաճառողը պարտավորվում է գնորդին մատակարարել Պայմանագրի անբաժանելի մաս կազմող N1 և N2 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիրով և գնման վճարման ժամանակացույցով նախատեսված ապրանքներ:

«ԱրմՎիլ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից խախտվել է պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետները ինչպես նաև ստացվել է գրություն ապրանքի մատակարարումից հրաժարվելու վերաբերյալ:

Պայմանագրի 2.1.6 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի) եթե վաճառողը էականորեն խախտել է պայմանագիրը:

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԱրմՎիլ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից խախտվել է պայմանագրով սահմանված պարտավորությունը՝ գնորդը միակողմանի լուծում է պայմանագիրը և այն համարելով լուծված 164613.8 (մեկ հարյուր վաթսունչորս հազար վեց հարյուր տասներեք դրամ, ութսուն լումա) ՀՀ դրամի չափով՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017թ մայիսի 4-ի N 526-Ն որոշմամաբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունները, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացի տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով կամ պայմանգրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի կամ որակավորման ապահովման գումարը:

Այսպիսով «ԱրմՎիլ Գրուպ» ՍՊԸ-ին տրվում է 5 օրացուցային օր տուժանքով սահմանված և պայմանագրի ապահովման 15547 /տասնհինգ հազար հինգ հարյուր քառասունյոթ /ՀՀ դրամ և որակավորման ապահովման 23320/ քսաներեք հազար երեք հարյուր քսան /ՀՀ դրամը գումարները շահառուի 90000800664 հաշվի համարին փոխանցելու նպատակով: Սահնված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն «ԱրմՎիլ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակվելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում նեռառելու պատճառաբանված որոշումը Պատվիրատուն կներկայացնի լիազոր մարմին, իսկ մատակարարի կողմից ներկայացված որակավորման և պայմանգրի ապահովումները կներկայացվի մատակարարի բանկ՝ նշված գումարները գանձելու նպատակով:

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ՝ Տ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Երևան " 375037 Մ. Յաղուբյան 13 " (010) 20-15-86, 20-65-92, maryizmirlyan.childcarecenter@mlsa.am